



Տնօրեն

Հաստատում եմ

Յու. Սուքիասյան

« 29 12 » 2016 թ.

«Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսների բարեվարքության կանոններն ու պարտականությունները

1. Համաձայն կրթական չափորոշիչների ապահովել ուսանողների կողմից ծրագրային նյութի պահանջվող մակարդակի յուրացումը:
2. Ուսանողին զինել գիտելիքների հիմունքներով:
3. Դասապրոցեսը դարձնել արդյունավետ, ուսուցանվող նյութը՝ հետաքրքիր և մատչելի:
4. Օգտագործել ժամանակակից նոր տեխնոլոգիաներ, դասավանդման նոր մեթոդներն ու եղանակները:
5. Դասի տեսական մասն ամրապնդել կյանքի կարևոր գործնական հմտություններով ու կարողություններով:
6. Օգտագործել ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն ուսանողների հետաքրքրության, ակտիվության մեծացմանը, ինքնուրույն մտածելու և ստեղծագործելու կարողությանը:
7. Ժամանակին անցկացնել, ստուգել ուսուցողական և ստուգողական աշխատանքները:
8. Ճիշտ կառուցել դասախոս-ուսանող փոխհարաբերությունները:
9. Լրջորեն և սխտեմատիկաբար զբաղվել ինքնակրթությամբ:
10. Հետևել քոլեջի շենքի և գույքի պահպանմանը:
11. Պատասխանատվություն կրել ուսանողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման համար:
12. Դասից առաջ ուսուցչանոցից վերցնել դասամատյանը և լսարան մտնել դասին անհրաժեշտ բոլոր պարագաներով:
13. Դասն սկսվելուն պես կատարել ուսանողների հաճախումների հաշվառում՝ նշելով բացակայությունները և ուշացումները:
14. Դասամատյանի համապատասխան տեղում լրացնել դասի թեման և տրվող հանձնարարությունները:
15. Կիսամյակի վերջին դասաժամին ամփոփել տվյալ առարկայից ուսանողի ստացած գնահատականները:
16. Դասամատյանում չկատարել որևիցե ջնջում կամ ուղղում: Նման անհրաժեշտության դեպքում դիմել փոխտնօրենին:
17. Ծայրահեղ պատճառով աշխատանքի չներկայանալու դեպքում տեղյակ պահել տնօրենին:

18. Հարգելի կամ անհարգելի պատճառներով աշխատանքից բացակայող դասախոսները հաջորդ որը աշխատանքի ներկայանալիս, մինչև դասարան մտնելը, պարտավոր են տնօրենին գրավոր բացատրություն տալ բացակայելու մասին, թույլտվություն ստանալ և անցնել աշխատանքի:
19. Մշտապես ձեռքի տակ ունենալ առարկայական ծրագիր՝ հաստատված տնօրենի կողմից:
20. Ունենալ առարկայական թեմատիկ պլան՝ հաստատված տնօրենի կողմից:
21. Մովորողների ծնողների հետ չառնչվել դաստիարակչական հարցերից դուրս հարցերով: Նման անհրաժեշտություն առաջանալու դեպքում դիմել տնօրենին:
22. Կարգապահական խախտում կամ խրախուսելի արարք կատարած ուսանողին չպատժել կամ չխրախուսել գնահատականի իջեցումով կամ բարձրացումով:
23. Դասամիջոցն ուսանողի հանգստի համար է: Չի կարելի ծառայեցնել այն տվյալ դասին:
24. Կուրսղեկի հրավերով պարտադիր մասնակցել ծնողական ժողովին:
25. Դասախոսը պետք է օշտված լինի մասնագիտական կայուն գիտելիքներով, մարդկանց հետ շփվելու հմտությամբ, տիրապետի մանկավարժության, հոգեբանության հիմունքներին:
26. Ծնողական ժողովներին առանձին սաների ստացած գնահատականները ներկայացնել միայն սահմանված կարգով և ուսանողի մասին կարծիքներ չհայտնել ընդհանուրի ներկայությամբ՝ ծնողին դնել անցանկալի իրավիճակի մեջ: Նման հարցերը նպատակահարմար է քննարկել ծնողի հետ առանձին և խիստ անհատական:
27. Աշխատանքի ներկայանալ մշտապես կոկիկ տեսքով, ունենալ նրբակիրթ շարժուձև և էթիկայի կանոնների համապատասխան պահվածք և պարկեշտ կեցվածք:
28. Խիստ արգելվում է՝
 - Քուլեջի շենքում և նրանից դուրս բարձր ձայնով, անհարգալից դիմելաձևով վիրավորական արտահայտություններով դիմել գործընկերներին,
 - Ուշանալ աշխատանքից, հերթապահության ժամին թլինել նշված հարկում կամ վայրում,
 - Դասը վարել բարձր ձայնով՝ օգտագործելով ուսանողի անձը վիրավորող արտահայտություններ,
 - Դասի ընթացքում զբաղվել կողմնակի աշխատանքներով (տետրի ստուգում, ուսանողների հետ դասի թեմայից դուրս հարցերի քննարկում, բջջային հեռախոսով խոսել և այլն),
 - Չանզից շուտ դուրս գալ լսարանից՝ ազատ արձակել ուսանողներին,
 - Դասը խանգարող ուսանողներին դուրս հանել լսարանից, մատյանը փոխանցել ուսանողի միջոցով, դասի ժամանակ ուսանողին դուրս թողնել: